


ԱՐԱՅԻՆ ԳԵՂՈՒՄ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ


ԹԻԻ 58


ՕԳՈՍՏՈՍ 18/31 1912

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ԺԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ








ԿԱԹՈՂՈՍԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆՊԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԶԱՐԱԹԱԹԵՐԹ



Երկրորդ տարի ։ Օգոստոս 18/31 ։ Թիւ 58

ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ

ՓԱՌԱՌՈՐԵԱԼ ԿՈՒՍԻՆ ՄՍՐԻԱՍՈՒ ԱՍՏՈՒԱԾՍՍՈՐ

Բ.

Սրբունի՛ պայծառ... այսօր պաշեալ հասեր
ի բարձունս երկնից, իբր անընդունակ ապակա-
նութեան եւ մահու լուծման՝ մարմին, յորմէ
պատկառեաց ամօթով պարտին մահու. եւ ցու-
ցար բնակիչ արժանապատիւ կենդանեաց երկ-
րին՝ Տեառնդ կենակից, Սուրբդ Տիրամայր.
(Նարեկ Ներք. Ս. Աստուածածնի ։

Ի գիր անուան իւրոյ

Աստուածածին Կոյս մեռաւ ու թաղուեցաւ. բայց անոր սուրբ մար-
մինը չմնաց գերեզմանին մէջ և չտեսաւ ապականութիւն ։ Այլ յարու-
թիւն առաւ՝ ըստ նմանութեան Բրիտանիոյ՝ իր Որդւոյն, և միանալով
իր անմահական ու երանեալ հոգւով, փառապանծ համբարձաւ կամ վե-
րափոխուեցաւ յերկինս ։ Այս ցանկալի և մխիթարական ճշմարտութիւնը

Թէպէտեւ սահմանեալ հաւատոյ մաս չէ, սակայն բացարձակ յանդգնութիւն պիտի ըլլար ո՛չ միայն մերժել զայն, այլ և պարզապէս տարակուսիլ անոր վրայ. և Վատիկանեան Ժողովէն սկսած Կաթողիկէ տիեզերքի Նպիսկոպոսները միահամուռ դիմում ու հայցուած կրօնականացնեն Ս. Քահանայապետներուն, որպէս զի Տիրամօր Փոխումը կարգէ հաւատալեաց կամ Հրամանակարգ վարդապետութիւններու (dogmes) շարքին մէջ. եւ որովհետեւ, հակառակ անոր որ մեր Հայաստանեայց Եկեղեցին դարերէ ի վեր մեծամեծ ու բացառիկ հանդիսութիւններով կը տօնէ Վերափոխումը՝ քան զայլ ամենայն Եկեղեցիս ջերմեռանդաւոյն, ինչպէս պիտի տեսնենք ի ստորեւ, գտնուեցան սակայն, — դժբախտաբար, — յաւակնոտ և անաւարբեր էջմիածնական եկեղեցականներ, մինչև իսկ Նպիսկոպոս մը, և նոյն իսկ Պատրիարք մը, հմուտ գիտնականի և Հայ Եկեղեցւոյ պաշտպանութեան (մանաւանդ թէ կործանման իսկ) իբր թէ հմտալից հատորովն անուանի՝ գործին չեկած ատենը ամենահաստատուն աւանդութիւնները մերժող, եկած ատեն՝ չնչին և հնարածոյ աւանդութիւնները պաշտպանող, — երկուքն ալ կոյրք կուրաց առաջնորդք, իրենք չմտնող և ուրիշներն ալ չմտցնելու աշխատող, որոնք տարակուսով, գրեթէ ծաղրանքով ու վերջապէս մերժումով վերաբերուեցան այս քաղցր և դարաւոր ու տիեզերահռչակ վարդապետութեան հանդէպ. յոյժ ցաւալի է այդ, այո՛. բայց այնպիսիներէն չէր կրնար ուրիշ բանակակալուիլ. «խոսի խորոց կարդան»։ — Ուստի թէ՛ ի հաստատութիւն ճշմարտութեան և թէ՛ ի միախառնութիւն հաւատացեալ ծառայիցն Տիրամօր Կուսին, ուղեցինք փոքր ի շատէ ճառել այս ամենացանկալի նիւթիս վրայ։ —

Լ. Ի՞նչ է ուրեմն որ կը մատակարարէ այսքան ստուգութեան աստիճանը Ս. Կուսին վերափոխման վրայ. նախ և առաջ Եկեղեցւոյ համօրէն Հարց ու Վարդապետաց և Աստուածաբաններու հաւանութիւն ու համաձայնութիւնը, դարերէ ի վեր. համաձայնութիւն անմեկնելի, եթէ չբղխէր Ս. Եկեղեցւոյ վարդապետութենէն. Կրնանք քանի մը զըլխաւորները թուարկել Հարց Եկեղեցւոյ. Դիոնիսիոս, Խորենացի, Մելիտոս, Գրիգոր Տուրովեցի, Ս. Իգելփոնսոս, Մոսեսոս, Անդր. Կրեւացի, Ս. Գերմանոս, Ս. Յովհ. Դամասկացի, Ս. Բեռնարդոս, եւն. և ի մերոց Ս. Թարգմանիչք, Խորենացի, Զաքարիա Կաթողիկոս, եւն. և Ս. Գր. Նարեկացի, Ս. Ներսէս Շնորհալի, Ս. Ներսէս Լամբրոնացի, եւն. եւն., իսկ Աստուածաբաններու ահեղ խումբը անթիւ և անհամար է. Ապա հաւանութիւն ամբողջ տիեզերքի և ամէն ժամանակներու հաւատացելոց, նոյն իսկ հերձուածողաց և հերետիկոսաց անգամ, Հաւանութիւնը նաեւ ամէն ծէսերու և արարողութիւններու, որոնք կը տօնեն զնշմուշն և զՓՈԽՈՒՄՆ Սրբոյ Աստուածամօր Կուսի, և անոր փառաւորութիւնը՝ իր մարմնովն հանդերձ, անսպական ու վերածնեալ. Այսպէս

պէս է ահա այս վկայութիւններու բազմութիւնը, հնութիւնը, ոյժն ու ճոխութիւնը: Մեծ խնդիրն ուրեմն այն չէ թէ վերափոխումը աներկրայելի ճշմարտութիւն մ'ըլլայ. — այդ բացայայտ է, այլ թէ կը հաւատալէ ան՝ այն ամէն պահանջներն որով պէտք է որ ճշմարտութիւն մը Եկեղեցւոյ անսխալ վարդապետութենէն կարգուի հրամանակարգ հաւատարեաց մէջ, քանի որ ան ոչ միայն տրամաբանական հետեւութիւն է բազմաթիւ ճշմարտութիւններու, այլ նաև ճշմարտապէս կը բովանդակուի Աստուածային յայտնութեան գանձարանին մէջ:

Նախ, Աստուծոյ խօսքին՝ Ս. Դիրքին մէջ բացայայտուին չարութենակուած ճշմարտութիւն մը կրնայ շատ անգամ իբրև բնական հետեւութիւն պարունակուիլ ուրիշ յայտնեալ ճշմարտութեանց մէջ. ճիշդ այսպէս Հաւատոյ մաս սահմանուած է Մնարատ Յղութիւն Կուսին, հիմ բռնելով անոր Շնորհաց յուսթիւնն որով օծուած էր Մարիամ ուսկից Ս. Քահանայապետը կը հետեւցնէր՝ Անպատմ Կոնդակին մէջ, թէ կը սահմանէր «Չվարդապետութիւն ըստ Հարց աւանդեալ յաստուածային Դիրք»: Միեւնոյն տրամաբանութիւնը պէտք է գործածենք նաև վերափոխման համար և ի մէջ բերենք երկու գլխաւոր վկայութիւններ Ս. Դրոց, որոնցմէ իրաւամբ պիտի եզրակացնենք այս ճշմարտութիւնը:

Ա. Յիշենք հրեշտակային ողջունատրութիւնը, ու Եղիսարէթեան օրհներգութիւնը (Ղուկ. Ա. 28, 42). «Ողջոյն քեզ, յի շնորհօք. օրհնեալ ես զու ի կանայս»: Աղեքսանդր Դ. Քահանայապետը մեկնելով քրիստոնէական հաւատոց գլխաւոր մասերը, կ'ըսէ. «Մարիամ յղացաւ առանց ամօթով կարմրելու, ծնաւ առանց ցաւոյ, և յաւսեաց փոխուեցաւ առանց ապականութեան, ըստ բանի Հրեշտակին, մանաւանդ Աստուծոյ՝ Հրեշտակին ձեռքով, որպէս զի լեցուն ցուցուէր շնորհքով և ո՛չ կեղեցուն» (Թղ. 22. առ Սլթ. Իկոն.): Քահանայապետին առ խօսքերը կ'ապացուցանեն՝ ա) իր ստոյգ համոզումը վերափոխման խորհրդոյն վրայ. բ) թէ՛ ըստ իրեն, առ ճշմարտութիւնը Աւետարանի Լի Շնորհ ՀՕԲ խօսքին մէջ պարունակուած է. Եւ յիշաի. կ'ըսէ Սուարէզ. «Շնորհաց լիութիւնը ըստ ընդհանուր մեկնչաց՝ նոյն իսկ ըստ Ս. Թովմայի. կը բովանդակէ ամէն առանձնաշնորհումներու շնորհաց ամէն պարգեւները, որոնք՝ ուղիղ բանականութեան համաձայն կը պատշաճին Աստուծոյ Մօրը: Ոյր վասն Հարք և Աստուածաբանք բաւական սեպեցին զայն... հաստատուիլ համար Ս. Կուսին անարատ յղութիւնն յարգանդի մօրն»: Ուստի միեւնոյն իրաւամբ պիտի եզրակացնենք թէ նոյն լիութեան մէջ պարունակուած է նաև վերափոխման շնորհը: «Ափեցան շնորհի ի շրթանց քոց, վասն այնորիկ օրհնեաց, զքեզ Աստուած յալիսեան» (Սղմ. ԽԴ, 3.). Նոյն հետեւութիւնը կը հաստատուի նաև միւս խօսքերէն. «ՕՐՀՆԵԱԼ ԵՍ ԴՈՒ Ի ԿՍՆԱԵՍ», այս է՝ ամէն կիներէն վեր. ուստի քնաւ չենթարկուեցաւ նա կնոջ զէմ արձակուած անէժքի՝ Հե-

տեւարար «Պիտի դառնաս հողի՝ ուսից առնուեցար» (Ծնն. Գ. 19) վճիռը Մարիամու համար չյարմարեցաւ երբեք, «Անէծքը հասարակ եղաւ արանց ու կանանց, որպէս զի ի հող դառնային. այս անէծքէ ազատ եղաւ Երանելի Կոյսն, քանզի մարմնով վերափոխուեցաւ յերկինս» (Ս. Թովմ. Ագ. Ի Ս. Օգ.), եւ ինչպէս Մարիամու Անարատ Յղութիւնը, նոյնպէս նաեւ իր վերափոխումը՝ եթէ ոչ ներգործութեամբ, այլ՝ անպատճառ գօրութեամբ պարունակուած է Ս. Գրոց յիշեալ վկայութեան մէջ¹։ Այսպէս ըստ մեկնութեան Ս. Հարց.

Բ. Ս. Գրոց երկրորդ վկայութիւն է Ծննդոց Գրքին վճիռն (Գ. 14, 15). «Պիտի դնեմ քչնամութիւն քու եւ կնոջ միջեւ. քու զաւիտի ու անոր զաւիտի միջեւ. անիկա պիտի քանցախէ քու զոյտիդ»։ Հոս կ'ակնարկուի Փրկչին և անոր ամենօրէնեալ Մօրը։ Ուրեմն մշտնջենական թշնամութիւն օձին ու կնոջ և անոր զաւկին մէջ։ Չախջախիչ յաղթանակ Քրիստոսի՝ սատանային դէմ։ Արդ թ'նչ բանի վրայ կայացած է Փրկչին այս յաղթանակը։ «Աստուծոյ Որդին եմեցնաւ Քրիստոս զի աւրե ու ջնջեւ ռասանային զործերը» (Ա. Յովն. Գ. 8). ահա իր յաղթանակը, Հեւտեարար ամենէն առաջ յաղթեց մեղքին. և՛ հեւտեարար, ցանկութեան ու մահուան, երկու պատեղներն մեղաց, և նաեւ գործք սատանային, քանի որ երկուքն ալ մեղքով մտան յաշխարհ։ (Հմմ. Յովն. Ա. 29. — Հռ. Է. 23—25. — Օ. Կոր. ԺԵ, 21, և 55 հ.)։ Բոլոր մարդիկ մամանակից են այս երբակի փառաւոր յաղթանակին, թէ և տարբեր կերպով։ (Հմմ. Հռ. ԺԶ. 20)։ Բայց Կնոջ, այս ինքն Մարիամու մասն թ'նչ պիտի ըլլայ այս եռապատիկ յաղթութեան մէջ. ամենէն մեծը՝ բնականաբար Քրիստոսէն ետքը. մինչև իսկ կոչուել՝ Փրկչակից։ Ուստի անոր վրայ տէրութիւն պիտի չկարենան ունենալ՝ ո՛չ մեղք, ո՛չ ցանկութիւն, ո՛չ մահ, ինչպէս չունեցաւ իր Որդւոյն՝ Քրիստոսի վրայ։ «Նա քախջախեցեալ զգոյիս քու»։ Արդ հաւատքը կը սորվեցնէ մեզի առաջին երկուքին համար. զի ո՛չ մեղք, ո՛չ ցանկութիւն և ո՛չ իսկ շօշափեցին զանարատ Կոյսը։ Ուստի միեւնոյն տիտղոսով զերծ եղաւ նա նաեւ «մեղաց քոշակ»էն այսինքն սատանային գործ եղող մահուան աւպականութենէն, ինչպէս իր Որդին, նորն Եւա «Լուծիցն երկանցն Եւայի» որու միջոցով «Կուսին նախնոյ մօրն Եւայի Բարձան անեծքն սրտակալն», և որու ձեռքով ամէնքը պիտի վերակենդանանան, ո՛չ՝ նա պիտի չկրէ անպակմութիւն։ Այսպէս մեկնեցին Ս. Հարգ.

Կը մնայ ուրեմն ապացուցուած որ Մարիամու վերափոխումը Ս. Գրոց մէջ զօրութեամբ պարունակուած է։

2. Աշտարակ ամուր է ճշմարտութեան՝ ԱԻԱՆԴՈՒԹԻԻՆԸ, Աւան.

¹ Այս պատճառաբանութիւնք գեղեցիկ կերպով շարադասուած են յիշեալ «Անպատճառ» Կոնգակին մէջ։

դուժինն է որ գլխաւորաբար կը կառավարէ տիեզերքը և խելամուտ կ'ընէ թագակիրներն և իմաստունները . ազգերու ապահով ուղեցոյցն է աւանդութիւնը և օրինաց մաստաններուն հիմը և պահպան ժողովըրդոց գանձերուն : Եկեղեցւոյ աւանդութիւն սրբազան է և երկրպագելի . զի անհասնում վերելքով կը հասնի մինչև ց'Բրիստոս : Պօղոս Առաքեալ կը հրամայէ պինդ պահել աւանդութիւնները : Եկեղեցւոյ մէջ կարեւոր հանգամանքները կրող աւանդութիւն համազօր է յայսնեալ ճշմարտութեան : Հակառակ նախադասութիւնը դասապարտուած հերետիկոսութիւնն է . (ժողով Նիկիոյ Բ . և Կոստանդ Դ . : — Տրիտ . Նիստ Դ . : — Վասիլի . Ժողով . Նիստ Գ . Գլ . Բ .) : Աստուածամօր վերափոխման նկատմամբ եղած աւանդութիւնը Վասիլկանեան ժողովոյ Աստուածաբաններուն և Հայրերուն համաձայն , որոնք պատրաստութիւն կը տեսնէին վերափոխումը հաւատոյ մաս հրատարակել տալու . ունի այն ամէն պայմաններն՝ իբր պատկանող Բրիստոսէ Տեառնէ մերմէ Առաքելոց և սասնյոժէ Ս . Եկեղեցւոյ յանձնուած աւանդի զանձարանին . իբր «Համաձայն , յարատե , հրապարակական և հանդիսաւոր և վաղեմի Աւանդութիւն երկոցունց Եկեղեցեաց» :

Եւ յերաւի երբ Աստուածածնի վրայ է խօսքը , կը դըրդին Եկեղեցւոյ դարերը , իրենց աւերակներէն ձայն կու տան երկրպագութեան , պարգելով թանկագին գանձեր . ճշմարտութեան անսպառ աղբիւրներ : Լեզու կ'առնուն դարերն ու կը խօսին . կը խօսին ու կը քարոզեն քրիստոնեայ հաւատքը : Եթէ անյնինք դարերէ վեր ելլենք , Ս . Կուսին մարմնաւոր վերափոխման վրայօք ընդհանուր համաձայնութեան մը կը հանդիպինք , զոնէ մինչև վեցերորդ դարուն երկրորդ կէտը՝ երբ տօնը արդէն չափ Եկեղեցիներու մէջ կը տօնուէր , յԱրեւելս և յԱրեւմուտս : Ուստի պէտք է աւելի հին ըլլայ անշուշտ վերափոխման վարդապետութիւնը : Իսկ Հայ Եկեղեցւոյ աւանդութիւնը դեռ աւելի հին ժամանակներու կը վերածէ այս համոզումը , մինչև իսկ Ս . Սահակայ մեծի կը վերագրէ վերափոխման Ա . աւուր շարականաց կազմութիւնը այսինքն Դ . Դարու վերջերը կամ Ե . ի սկիզբը . զի Ս . Սահակ Կաթողիկոս նստու յամին 389 , Նաե Մովսէսի Խորենացւոյ կը վերագրուի նոյն շարականը և թուղթ մը , զոր գրեց առ Սահակ Նախարար Արծրունի . որուն մէջ կը յիշատակէ Ս . Կուսին փոխման պատմութիւնը և անոր փառաւորութեան օրը կ'անուանէ «Տօն Իսկուհեոյն» , որ Աստուածածնայ տօներուն մէջ ամենէն հանդիսաւորն էր : Այս եղելութիւնը մեծ փառք է մեր ազգին համար , որ Աստուածամօր փառաբանութեան մէջ միշտ առաջնակարգ տեղին բռնած է . իսկ վերափոխման տօնին մասնաւորագոյն եռանդով վերաբերում է :

Ս . Յովհան Դամասկացի , Մարիամու ամենէն հոյակապ ներբողասացներէն մին , որ և ըսած է թէ՝ «ըստ որում որդի՝ ի հօրէ ի վաղըն» :

ընդ ընկալաք», ըստ պատմութեան եւթիմիոսի, կը յիշատակէ (ճառ Բ. Ի Ննջմ. Կուս.) շատ վաղեմի ու շատ ճշմարտախօս աւանդութիւն մը որ Քաղկեդոնի ժողովէն (451) շատ աւելի առաջ է: Կը պատմուի թէ Բուղդերիա դշտոյն (414—453) և Մարկիանոս իրենց Ի Կ. Պոլիս Բլաքերիք մէջ ի պատիւ Աստուածամօր շինած մէկ եկեղեցւոյն համար Ս. Կուսին մասունքներն ուզած էին Պոլիս գոնուող Երուսաղէմը Պատրիարք Յորնաղէն, որ վերափոխման հին աւանդութիւնը պատմելով, իրենց խնդրանքին անհնարին ըլլալը յայտնեց. կրկնելով կարծես Եղիսէին «Մի՛ առաքի՛ք» հրամանն անոնց որ կ'ուզէին զԵղիա՝ յետ շարժմամբ վերանալոյ յերկինս, խուզարկել հետազօտել, (Դ. Թագ Բ.) կամ հրեշտակին խօսքը՝ «Ձե՛ք խնդրե՛ք զկենդանին ընդ մեռեալս. չե՛ք մտնէ՛ք, յայլ յարեալ» (Ղուկ. ԻԴ, 5):

Նոյնպէս Գեղասիոս Քահանայապետ 494 տարին հրատարակած վրձնագրոյն մէջ անհարադատներու կամ անվաւերականներու (apocryphe) կարգը դասեց. այսինքն Աստուածաշունչի մաս չըլլալը հրատարակեց «Յաղագս փոխման Մարիամու» գրքոյկը, որ ծաւալած էր Արեւմուտքի մէջ, բնականաբար աւելի եւս Արեւելքի մէջ, ուր կը թուի թէ երեւան եկած ըլլայ:

Արդէն այն ժամանակները այլ և այլ գրքեր, զանազան լեզուներով, տարածուած էին վերափոխման վրայ. որոնց մին կը վերագրուէր Ս. Մելիտոնի, երկրորդ դարու Ս. Հայր մը. ուրիշներ Ս. Դիոնիսիոսի, Նիկեոյիմոսի, և նոյն իսկ Յովհաննու Աւետարանչի, Երեւելիքնազատն թիշնտօրֆ ասոնք ամէնքը ծագած կ'ըսէ յունարէն բնագրէ մը որ գրուած էր երկրորդ դարու մէջ¹:

Յայտնի է ուրեմն որ Ս. Կուսին վերափոխման աւանդութիւնը կ'ելլէ մինչև Եկեղեցւոյ ծագման օրերը: Թէև ասոր վերաբերեալ այլ և այլ պատմութեանց մէջ շատ տարբերութիւններ կան, սակայն էական կէտերուն մէջ ամէնքն ալ միաբան են: Մելիտոնին գրութիւնը կ'ըսէ թէ Առաքեալներն հրաշալիօք ամպերու վրայ եկան յերուսաղէմ² միեւնոյն օրը և Մարիամու մօտ շարուեցան միւս հաւատացեալներու հետ, մինչ

¹ Նոյն իսկ Եթովպացւոց քով, որոնք հնութեամբ երեւելի են, մուտ գաած է այս աւանդութիւնը: Իրենց Մաթթէ անուանեալ երգին մէջ, Ի տնտես 37, կայ գրուած. «Ո՛վ Մարիամ, ողջոյն քու մեռած մարմնոյդ, որ չմնաց գերեզմանի մէջ. Ձի յական թօթափել չօրը կենաց չոգին յարութիւն տուաւ անոր» (Revue de l'Orient Chr., 1909, N^o 1, էջ 97):

² Ամենահին աւանդութիւնք, Դիոնիսիոսէ սկսեալ մինչև Դամասկոսի, անայլայլ կ'աւանդեն որ Տիրամօր հանգիստն տեղի ունեցաւ յերուսաղէմ Ի Ս. վերնատան Էմթաղեցոյ Ձիթենեաց լեռը, ուսկից վերափոխեցաւ Ս. Յովհաննէս Աւետ. յետ փոխման Կուսին գնաց հաստատուեցաւ յեփեսոս. և որովհետև հոն եկեղեցի մը շինուեցաւ յանուն Ս. Աստուածածնի, զոր պարծանօք կը յիշէ Եփեսոսի Ս. Ժողովը, վրիպակաւ կարծեցին ոմանք թէ ինքն Ս. Կոյսն ալ հոն եկած ընտկած ըլլայ:

Յիսուս իջաւ երկինքէն կոչելու համար իր Մօր սրբամանեալ հոգին, և տեսաւ անոր աւանդումը. ամէնքն ի միասին այն շնորհազարդ մարմինը տարին հանգուցին ի նոր գերեզմանի Յովնափաթ ձորին մէջ. երեք օր հսկեցին գերեզմանին մօտ, ազօթելով և երրորդ օրը տեսան որ ի ձայն Որդւոյն յարութիւն առաւ օրհնեալ մարմինն և ամբարձաւ յերկինս, տարուելով ի հրեշտակայ՝ ամպերու վրայ: Միւսներուն տարբերութիւնները չնչին են. Յիսուս կ'իջնէ անթիւ հրեշտակներով. տեսան Մարիամու հոգւոյն յալիւր բարձրանալը. գերեզմանին վրայ հրեշտակներ կ'երգէին անդադար, եւ անուշ հոտ մը կը բուրէր. Թովմաս վերջը հասած էր ան միայն յետաւ վերափոխումը, երբ ի Հնդկաց կու գար. և Զիթենեաց լերան վրայ էր. և Մարիամ երբ ի վեր կը բարձրանար ձգեց անոր այն գօտին որով Առաքեալք շրջապատած էին իր սուրբ մարմինը: Ասոնք և ուրիշ ասոնց նման են տարբերութիւններն: Մեր Հայաստանեայց Եկեղեցւոյն մէջ ալ այս աւանդութիւնները շարունակուեցան և ասոնց վրայ յօրինուեցան չարականներն և մանաւանդ Փոխման Անձինքը՝ «Արեւելք գերարփին և օթարան լուսածին» զոր յօրինած է Կիրակոս Վ. հաւանաւ կանարար՝ Երզնկացի, ի ԺԵ դարուն, ինչպէս կ'երեւի ի վախճանի դրութեամբ «Կերտող բոլոր եղելոց» Դիւանգիր Մայրանուն (acrostiche) կտորէն: Արդ, ինչպէս կը տեսնուի, էական կէտերուն մէջ ամէնքն ալ համամիտ են. ամէնքն ալ կը հաւատան Մարիամու մասն ու յարութիւնը, ամենուն մէջ Յիսուս Բրիստոս կը յայտնէ Առաքելոց թէ կ'ուզէ որ իր Մօր մարմինն ալ տանի երկինք. ամէնքն ալ ցոյց կու տան մեզ թէ Առաքեալք յայտնի նշանով մը համոզուած էին թէ Աստուածամօր մարմինը գերեզմանէն իրօք ելաւ՝ փառաւորեալ. վերջապէս ամէնքը հրաշալիօրէն կը վկայեն յարգութիւնն, մեծարանքը ու որդիական տէրն Բրիստոսէից առ Մարիամ. և մանաւանդ Աստուծոյ մօտ անոր ունեցած մեծ կարողութիւնը. զի այն ծայրագոյն վայրկեանին իսկ իր Մօրն քրած խոստումներուն մէջ կայ նաև այն որ ինքը պիտի օրհնէ ով որ իր Մայրը պիտի պատուէ և անոր միջոցով խնդրուած բոլոր շնորհները պիտի պարգեւէ:

Ի՞նչ կրնանք ուրեմն հետեւցնել այսպիսի յիշատակածքանքերէ, որոնք նաև ըստ քմայ թարգմանողներու փոփոխութիւններ չկրած են: Ամենակարեւոր կէտ մըն է այս պատմութեան ետքիւնը, իր բոլոր յիշուածոց եկամուտ զարդերէն մերկացուած. այս հոռիօքը ճշմարիտ է, և այն, ինչպէս չափ հաւանական է, կը պատկանի երկրորդ դարու: Հետեւաբար Մարիամու Աստուածամօր մարմնաւոր վերափոխումը կը հասնի Եկեղեցւոյ սկիզբներուն, որով և պէտք է ըսել թէ մեր Տէրը

1 Նմանութեամբ Հռիփսիմեանց այբուբենական գլխավորգութեամբ յօրինուած հիւնայի Շարականին որ «Անձինք» բառով կը սկսի, այս շինուածքն ունեցող ուրիշ չարականներ ալ «Անձինք» տնուանուած են:

Քրիստոսէն իր Առաքեալներուն աւանդուած է, և անոնք ուսուցին զայն իբր ստոյգ եղելութիւն մը:

Այս է ահաւասիկ իմաստը այս պատուական ու մխիթարիչ, դարաւոր, միաձայն ու անընդհատ աւանդութեան, որուն մեկնիչ են բոլոր եկեղեցիներու ծէսերն ու Սուրբ Հարք, որոնք նկատեցին այս ճշմարտութիւնը իբր հիմնուած նոյն ինքն Աստուծոյ ներշնչեալ վկայութեան ճոխութեանը վրայ:

«Ողջո՞յն եեզ, Աստղ ծովու, Աստուածամայր վեհ սգոյն. Եւ անուաս միշտ Սուրբ Կոյս, Սրանցի դուռն երկնից:...

«Լո՞յծ գկապանս մեր պարտեաց, եւ լուսասու լե՛ր կուրայ. Մերժեա՛լ ի մեց՝ զչարիս. Ընկա՛լ զբարիս համօրէն:

«Յո՞յց մեզ զեզ լինել մայր, Քեւ քնկալցի զպաղասանս որ վասն մե՛ր ծնանելով՝ Յօժարակամ եղել Բոյզ:

«Ո՞վ Կոյսդ դու հրեայի, հեզ եւ Բա ցր Բա զբնաս Քաւեալ զյանցանս՝ աւա՛ զմեզ հեզ, հոգի ողջախիհ:

«Տո՛ւր մեզ շուկի ապահով. Զի տեսցուի մե՛ր զՅիսուս, Եւ հանապազ հրճուեսցուի»¹:

ՕՐՄԱՆԵԱՆԻ «ՀՍՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ» ԳԻՐՔԸ¹

Բ.

Նախաբանէն վերջ, զոր քննեցինք, կուգայ Յառաջարան մը, զոր գրած է Bertraud Bareillos «Հայոց եկեղ. պատմութեան ո՛չ քաջ ծանօթ մը» կ'ըսէ Հանդէս Ամսօրեայ, և մենք պիտի ըսենք Օրմանեանի արժանաւոր ջատագով մը, անոր գիտմանց հաւատարիմ թարգման մը: Այս տեսակէտով միայն կ'արժէ որ հետեւինք ուշի ուշով այդ Յառաջարանի տեսութեանց, որպէս զի անգամ մ'ալ հաստատուի թէ Օրմանեան ուղած է ծառայել իր գրքին մէջ այն հոսանքին որ եկեղեցի չի չիներ, այլ կը քանդէ իբրեւ ա՛լ եւս ո՛չ պիտանի պատուար մը ազգային պահպանութեան, այլ մանաւանդ արգելք մը ցեղային միութեան. «Բաժանեան միջնորմ, որ այժմ իւրաքու ղիսնաց զսնուող ազգութիւնները իւրաքու ղի զատէ» (էջ 16): Կ'ազգարարենք թէ չպիտի ուղենք այդ Յառաջարանի ներքումով զբաղիլ իրականօրէն, ամբողջ գրքի եղծը չկանխելու համար. այլ միայն պիտի վերլուծենք՝ աչքի առջի դնելով սքողուած մոլոր ու դաւաճան սկզբունքներն, որոնք Հայ Եկեղեցի ոյ ջա-

¹ Ս. Բեռնարդոս:

² Տես թիւ 55, էջ 420:

սագործութեան կերպարանքի տակ զայն կ'անպատուեն՝ ներկայացնելով զայն յեղափոխութեան բոյն մը: որ այսօր կրօնքներու վերջնական քանդումի և վարժումի յառաջապահ տերունդը կը սնուցանէ յորդորելու և մղելու չափ զՕսմանեան Պատուիւնը որ «նոր ճիգ ուն ալ ընէ, եւ յեղափոխութիւնը մինչեւ իւր վերջին կէտը յառաջ մղելով... քոչափ հնար է կատարեալ աշխարհակազման ճառքուն վրայ դնէ»: Բացառութեան կարօտ չէ, մեկին է դիտուած ուղղեցիմը:

Առաջին գովարանական նախադասութիւնը որ աչքի կը զարնէ՝ հետեւեալն է. «Ներկայ աշխատութիւնը ճշմարտութեամբ կը պատկերացնէ արեւելեան փրօսոնեութիւնը իւր վարդապետութեամբ, իւր հաւածաշիջներով իւր նուիրապետութեամբ ու միեւնոյն ասեմ խղիւղական եւ կենցաղական ուսումնասիրութեանց ալ կը նպաստէ (էջ 9): Սխալի բնաբանն է քրիստոնէութիւնը Արեւելեանի և Արեւմտեանի բաժնել, պարագան է հոս ալ բոլոր թէ «ի սկզբանէ ո՛չ եղեւ այնպէս»: Որովհետեւ միեւնոյն Բրիտանիոյ, որ երկի եւ այսօր նոյն եւ յաւիտեան է, միեւնոյն անհրաժեշտ վարդապետութեամբ, միեւնոյն հաւատքով, միեւնոյն խորհրդոց տառնութեամբ կազմեց զՆիկիեցիին և զայն իրեն հարմար ընտրեց և կացոյց իւր յանգիման փառաւոր, սուրբ և անսրտ և մասնեց իր անձը անոր համար՝ որպէս զի զայն պահէ իբրեւ իր մարմինը, որուն ոսկր մը իսկ պիտի չփշրէր մնալով ամբողջ՝ անլուծանելի միութեամբ և այս միութեամբ է որ հիշմը դրաւ խորհրդականութեան քրիստոնէից ամուսնութեան «խորհուրդս այս մեծ է քայց ես ասեմ իսկ ՚ի Բրիտանիոյ եւ յեկեղեցի»: Այս աստուածային միաւորութեամբ բանին Աստուծոյ բնագ մարդկային բնութեան և անով առհասարակ քրիստոնեայ ճշմարիտ Եկեղեցւոյն հետ՝ Բրիտանիոյ Տէրն մեր անդամ բոլոր միեւնոյն մարմնոց ամէն ճշմարիտ հաւատացեալներն միութեամբ աւագանին մկրտութեան և միութեամբ հաւատքի առանց խափր զնելու արուի և էգի, հոգի և հիմանաւ. վառն գի հոն խուժողով պիտի չըլլար և ինչպէս մէկ է Աստուած, և մէկ Բրիտանիոյ նոյնպէս մէկ պիտի ըլլար հաւատք ու մկրտութիւն: Անոր համար Առաքեալներն ու անոնց յաջորդներն այդ միութիւնը պահելու ետեւէ եղած են՝ չբաժնուելու համար Բրիտանիոյ «սինեցի՛ք, կ'ըսէր Պօղոս Առաքեալ նախնի քրիստոնէից, երբ իցեք ՚ի նոյն հաւատս» և դարձեալ «աղայեմ զձեզ, եղբարք, անուամբ Տեառն Յիսուսի Բրիտանիոյ. զնոյն քան ունիցիք ամենեւեան եւ մի՛ իցեմ ի ձեզ հեռմամբ»: Այս միութեամբ Բրիտանիոյ Տեառն մերոյ սերունդը բազմապաւ իբրեւ զաստեղս երկնից միեւնոյն Հօր Բրիտանիոյ ու միեւնոյն մօր եկեղեցւոյ զաւակ. «ամէն ազգերն որ երկնից ներքեւ կը բնակին, կը գրէ Եկեղեցւոյ առաքելական զարէ՛ Հայր մը, ունկնդրե՛ք եւ հաւատալէ ետք, յանուն Որդւոյն Աստուծոյ կոչուեցան եւ ընդունելով դրօշմն միեւնոյն միտք, միեւնոյն զգացումն ստացան և եղաւ պիտեաւն մէկ հաւատք ու մէկ սէր»

(Բաբրաս . Բ . Դար) : Այս է հարազատ նախկին Քրիստոնէութեան ծագումն . պառակտումը , Արեւելեանի ու Արեւմտեանի խարութիւնը այն իմաստով թելադրամէ անկախ նուիրապետութիւն ունեցած ըլլան , որումնացանի գործ է ինչպէս պիտի տեսնենք յոյժացս գրքին :— Բայց Օրմանեան Հայոց Եկեղեցին միայն նկարագրելով՝ ինչպէս կրնայ պատկերացուցած ըլլալ անխտիր ամբողջ արեւելեան քրիստոնէութիւնը , երբ այդ քրիստոնէութեան մեծ հատուածը՝ Յոյնը՝ նոյնիսկ իբրեւ քրիստոնեայ չի ճանչար զՀայն : Միութեան ձեռքոնէն բաժանեալ եկեղեցիք միայն մէկ կէտի մէջ վաղ թէ անագան կրնան իրարու հանդիպիլ ուրացութեան մեջ , որ հիմայ ամէն տեղ աշխարհակախոսացում անուամբ կը պատրաստուի :— Այս նպատակաւ և այս կերպարանքի տակ պատկերացընելու համար զՀայ Եկեղեցին՝ կարելի չէր բնականաբար ճշգրիտ ու ամբողջական պատմութիւն մը յօրինել . ոստատուն և անձնական տեսութեանց քաջքուած դէպքերու չարակցութիւն մը ըլլալու էր , որպէս զի հնար ըլլար վերջնական նպատակին ծառայեցնել : Պատմական այս ակար կողմին է անշուշտ որ կ'աւելարկուի երբ կ'ըսուի ժամանաբար . « Պէտք չի անոր մեքսիկոնեց Հայաստանի տրեսնեղքիսն ընդունելէն միեջն մեր օրերը կրտսրեայ եւ տարեգրականագրութիւնը : Այսպէս ըսած ըրաշու համար . հեղինակը պատրաստուի պիտի ըլլար՝ վիպութեանց ներքեւ խնդրել քիւր գործը » . Սակայն կրնար տեսնել այդ խնդրումի՝ իր բաժանումին համապատասխանող ամբողջութիւն մը ընծայել չաա մը կարեւոր մանրամասնութիւններ մէջ բերելով փոխան իր անձնական կարծիքը եղող չաա լմը խորորդումութիւններու . կրնար աւելի տարակայական , աւելի փաստացի ըլլալ : Բայց « Ըստ փախցած է իւր ընթերցողները յոգնեցնել » . այսու հանդերձ մոլորեցնելու չափ չարք մը չպիտի ըլլար այդ յոգնեցնելը : Սակայն այս չէ որոտնաւոր « Օրմանեան ուղած է « այն պարագաները միայն » և այն կերպարանքի տակ յառաջ բերել որ « իր նպատակին Արեւելեան Աշխարհի կարեւորագոյն մէկ ճիւղը » բունէն կարուած . առանց արմատի ինքնիրեն աճած ու պտղաբերած ցուցնելու . . . այսինքն զուգնելու . հեղինակին երազած իւրաքանչիւր ազգի ինքնուրոյն եկեղեցւոյ դրութիւնը . . . Այս պարագային սակայն պատմաբան մը չըլլար այլ յամառ աղանդաւոր մը :— Այսու հանդերձ յառաջարանողը պատմութեան առաւելութիւններ կը գտնէ , որոնց կ'երեւի թէ ինքն առաջին անգամ կը հանդիպի . ա) Օրմանեան քնիկ Արեւելցի մ'է կ'ըսէ . և այս նոր բան մը չէ պատմաբանի մը ճամբար . և ո'չ կ'աւելցնէ արժէք մը գրքին . կրնար ինքն բնիկ արեւմտցի մը ըլլալ և նոյն իսկ Հայ Եկեղեցւոյ վրայ աւելի ճշգրտէն գրել : Ասոր օրինակն ալ ունեցանք և Օրմանեանի գրքին ժամանակակից : Սակայն չատագովին դիտաւորութիւնն է զՕրմանեան Արեւելցի ըսելով Արեւելեան մտայնականութեան տիպարն « ներկրագնել (.) : Հոս՝ հարցական կէտ մը կը դնենք մենք որ Օրմանե-

եանի անցեալը դիտենք. նա ճարտար միայն մ'է՝ եթէ այսօր ուզէ իր գրածին բոլորովին հակառակն ալ կրնայ գրել և աւելին գիտի ըսեմ՝ կաթողիկեայ վարդապետի մը ամբողջ համոզողական ճշմարտութեամբ, Բայց նա 'ի վաղուց Արեւմտեան ազանդաւորներու արհեստին հետա- մուտ է և կը տքնի մոլորութեան, սուտին և սխալին գիտական կեր- պարանք տալու: Վերջերս Արդիականութեան դրութիւնը իրեն շատ ժպտուն երեւցաւ և անոր է գլխաւորաբար որու պատճառ է ազուցել իր Հայոց Եկեղեցին: Հետեւաբար իր մտայնականութիւն՝ նա Արեւելքի՝ մանա- ւանդ Հայուն անձանօթ քանապաշտութիւնը, Թէոփէստական ենթա- կայութիւնը գրականապաշտութիւնը, ինչ որ վերջապէս արդիականու- թեան թուուցիկ դրութիւնը կը թեւաւորէ՝ ուզած է իւրացնել և հայ Եկեղեցւոյ սեպականել Փոսի մը նենգաւորութեամբ: Բայց այդ ամէնն փիլիսոփայական դրութեամբ ներկայացնել՝ խեղճ Հայուն անմարտելի պիտի բլլար և ահա ինչու համար ուզած է խառնել պատմութեանը մէջ. պատմութիւնով «ամենուն դիւրամասցելի ընծայելու համար իւր նի- քը»: Որչափ կ'արդարանայ հոս վերջին Ազգային Միեւրոսի Հարց ազ- դարարութիւնը: Ա. հաւաքական թուղթին մէջ, որով հայեացք մը նետելով առնաստարակ Հայ Ազգին և անոր Եկեղեցւոյն գլխուն վրայ գործընթացող միջնուրարին վրայ կը զգուշացնէին թաւանացող և մուտք գտած գործնական Արդիականութենէ: Ասոր դէմ գայրացան շատեր թէ մեզ անձանօթ ու անունն իսկ չստեած մոլորութիւն մը կը վերագրուի Հայուն: Օրմանեանի գիրքը անոնց մէ է, որոնց կ'ականակէին արթուն հովիւներն երբ կը գրէին. «Եւ յիւրօրի որ մոլորութեանց եւ հերետիկո- տութեանց անկոխումը synthèse մեր երկրէն այնչափ օտար ըլլայ, ընդհա- կառակն արդէն զսած է այն իր ցասագովները, որոնք միեւն լանգամ ժպր- հոբերին ունեցան ներկայացնելու զայն. Իրեւ աւանդական վարդապետութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ» (Էջ Ա. Թղթ. Հաւաք. էջ 7): Իցիւ թէ սթափէին հայեր այս ազդարարութեան առջև և մանաւանդ Հայ Կա- թողիկեայք, որոնցմէ ապստամբները իրենց հակակաթողիկէ շարժումը Օրմանեանի գրքով արդարացնելու միամիտ ագիտութիւնը ունեցան: «Ո՛հ, չխաբենք մենք զմեզ, կ'արժէ որ կրկնենք յիշեալ հեղինակաւոր նամակին խօսքերն, արդիականութեան ծեսական սխալ վարդապետութիւ- ներն երբ ուրիշ տեղեր գիտական հնարանութեան եւ արդի փիլիսոփայու- րեան յորձանքներ են, մեր երկրին մէջ, ուր չի կրնար մասցելի ըլլալ իր այս դժուարինսց ձեռքն չակ. ամենեւն աւելի գոռնական կերպով գործադ- րելի կ'ըլլայ. վասն զի վերջապէս իրական, քողոքականութիւնէ աւելի մղեալ դիպ ի իրականութիւն. քակէ ըստ երեւութի՝ աւելի պահպանողական՝ նոյնապետութեան, եկեղեցական պաշտանսց եւ կենաց աւանդական ստա- փին երեւութի մէջ» (անդ): Արեւմտեան հովուաց պերզգոն յորդոր, որ ամբողջ ազգին գբրման գահավէժը կը մատնանչէ ժամանակին մեղք

այսին թէ չանսայ և չզգաստանայ, բ) Երկրորդ առաւելութիւնն որ կը շեշտուի Հեղինակին կողմանէ է այն որ 12 տարի պատրիարքական աթոռի վրայ գտնուած է: Կրնար այդ պարագան իր օրով Հայ Եկեղեցւոյ անցուղարձերու արժէքաւոր հեղինակութիւն մը սալ. մանաւանդ երկար տարիներ Հայ Եկեղեցւոյ խնդիրներով զբաղած ըլլալով՝ յուսովի էր և իրաւամբ կը սպասուէր յաջող արդիւնք մը ամէն մասամբ. սակայն կ'ենթադրենք թէ իր գրքին ամէն մէկ գլուխը փակելուն հեղինակն իր խղճի և հմտութեան առջև լրացած ըլլայ ինքն ալ *video meliora proboque deteriora sequor* — կը տեսնեմ որ այսպէս չէ, կ'ըմբռնեմ, սակայն կ'ուզեմ ստել: Խնդճ մարդկային կամք, որքան տկար է առանց Աստուծոյ շնորհաց. մտքի ուժը չի բաւեր զայն բարւոյն և ճշմարտին նաև քաղցնելու՝ անխտոր: Դ) Երրորդ առաւելութիւն. իրար ընդօրինակելով բան մը մէջտեղ նետողներէ չէ, պատմութեան համար այս արժէք չաւելցներ, որովհետեւ՝ պատմութիւնը հիմնապէս անձնական տեսութիւն մը չըլլալով, այլ իրողութեան, եղածին՝ աւանդութիւն մը, հարկ է որ պատմական ստույգ աղբիւրներու հետեւողութիւն մը ըլլայ, հեռանալ այդ աղբիւրներէն՝ անձնական գաղափարներու ծառայեցնել անցեալ մը, որ եղած բան մ'է անկախ ո՛ր և է հեղինակի կամքէ կամ մտքէ. անշուշտ վտանգի մէջ կը դնէ պատմութեան արժէքը: Այս պարագային լուսագոյն պիտի ըլլար նոյն իսկ ընդօրինակելով բան մը մէջտեղ նետելը, քան հեռանալով ճշմարտէն՝ սխալ պատմութիւն մը յերբերելը:

Դ) Բայց նա համոզման վրայ հիմնուեալ գրած է — չենք հաւատար. որովհետեւ զՕրմանեան այնքան ազէս չենք կրնար ենթադրել, թէ և կրնայ ինքն անձնական համոզումին հակառակ ալ գրած ըլլալ: և այս՝ առաջին անգամ չըլլար իրեն համար:

Ե) Մի անկախութեամբ գրած է. ի՞նչ լսել ուզէր. ստույգ կոպուելով Հայ Եկեղեցւոյ աւանդութեան. տարրելով՝ ի հարկին անհրաքելի փաստեր, որոնց առջև իր տեսութիւններն պիտի փայտէին... զործին եկած անպատմական հնարումներն՝ իբր պատմական իրողութիւն ներկայացնելով... անկախ ճշմարիտ Եկեղեցւոյ քրիստոսադիր սկզբունքներէն... առանց ակնածելու պատմաբաններէ և եկեղեցական գիտութեանց հմուտներէ... Այս ամէն իմաստով իրաւ է թէ անորակելի է Օրմանեանի համարձակութիւնը և այդ՝ ամէն մարդու գործ չէ: Այս ամէն տեսակ անկախութիւն կը շնորհենք, բայց չենք կրնար ընդունիլ թէ ինքն անկախ մնացած ըլլայ աղանդաւորաց ծառայելու կանխամիտ դիտումէն: Նա իր մտքի ազնուութիւնը բռնաբարած է անշուշտ գրելով ինքն իր ներքին գիտակցութեան ու զիտքեան հակառակ: Պիտի բաղձայինք հետեւադար տեսնել հեղինակին վրայ այն ճշմարիտ անկախութիւնը, որ հոգեւ ազատութիւն, անկողմնակալութիւն, անշահախնդրութիւն կը նշանակէ:

(Շարունակելի)

Հ Ն Ձ Ե Ա Կ

Ի ՓԱՏՈՒԱԿԱՆ ԱՐԻՒՆՆ ՅԻՍՈՒՍԻ

Մարմն յ վիշտերն ըսփռվելու զիտունն ունին մերք միջոց,
Եւ ի կանգնումն աւերակաց չեն պակասիր հանապարհի.
Բայց ո՞ւր գտնել դեղ ու դարման վիրաց հոգւոյ եւ ցաւոց,
Կեանք մարդոյն պիտի բաղխե՞ն ամէն կողմէ առապարհ:


Յոգնադիմի կարօտութեամբ երբ, տառապին եղկելիմ,
Երբ ընդհանուր տիե՛րս խաւար, լուսին ձայներ դրօշմդակ,
Ու երբ զմեզ չար փորձութեանց յնցեն հողմունք եւ ալիք,
Ո՞վ մեզ նեցուկ, խորհրդասու եւ անվրէպ օժանդակ:

Մեղաց ընկեր միտս անբաժան՝ աղետոյքին ժանգափոս,
Ի՞նչ փոյթ քէ մեր շուրջը մարդիք չզգան նողկանք ու ամօք,
Միքէ զուարթունք ի բաց անտի չերթա՞ն գոգցես վիրաւոր:

Ունկիանոսն իսկ չէր կարող, եղո՛ւկ, մահել երբէք զիս,
Սակայն քո մի կարիլն եւեթ, անգին Արի՛ւն Յիսուսիս,
Անա զօրէ սրբել ե՛ւ զիս ե՛ւ աշխարհներ բիւրաւոր:

25 Յուլիս 1912

Ո. Կ. Մ.



Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ռ Ո Վ Ս

Ամսոյս 21ին փորձանած է Կարգինայ Սամուսա Արքեպս. Երլաու քաղաքին որ
ծնած էր 30 Սեպտեմբ. 1828ին Աստուածարանական ուսմունքները Վիեննայի Համալսարա-
նին մէջ աւարտելով Կրօնի Կղերանոցին վերակոցու կարգուած, ի վերջոյ Պուտտբէշի
Համալսարանի մէջ Բրոֆէսոր կարգուած էր: Մեծամեծ բարիք և ծառայութիւններ ըրած
է իր թեմին, եռանդուն եղբայրսիրութեամբ, առաքելական նախանձախնդրութեամբ և
սուստ ուսատ պարգեւներովը, միայն աղջկանց գիշերօթիկ դպրոցի մը համար 10,000 ոսկի
ծախսած է իւր անձնականէն: 1894ի մէջ Հունգարիոյ եկեղեցական քաղաքականութեան
պայքարներուն մէջ հզօրեղապէս պաշտպանեց եկեղեցւոյ իրաւունքները: Մեծ կիրուստ մըն է
Հունգարիոյ համար:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ


Անցեալ շարժումն Ուրբաթ առաւօտը Վարչական ըստած ժողովոյ անդամներէն պատուիրակութիւն մը Ուսումնարանէն վարդապետանոցի շէնքն անցնելով, Աբհի. Արփիար-եան Արքեպիսկոպոսին ներկայացած և զեկուցած են թէ ըստ որոշողութեան իրենց ժողովին գրուած են տարբէն այդ Ս. Դրիդար Լուսաւորիչ Ուսումնարանը՝ Աբհի. Արքեպիսկոպոսական խօսքեր ուղղեց իրենց, այս 'ի նորոյ գործելու ձեռնարկած ապօրինութենէ զերենք ետ կեցնելու գիտումով և որովհետեւ այն օրը վիթթողիկոսն ու Փոխանորդն լացակայ էին, յորդորեց որ սպասեն. սակայն երբ պնդումի անվայել պատասխաններ առաւ, ըստ իր պարտուց յանդիմանեց եւս զիրենք այսպիսի անարժան ընթացից համար. Բայց տարբէն կարգ մը խռովարարք փխած էին խուժել և աղմուկ եւս հանել. հետեւաբար այսօրինակ յարձակման ու բռնութեան առջև զուապի միջապէսներու տեղի տալ չուզեց և հրաման ըրաւ Կաթողիկոսական Դիւանին վերաբերելոյնը վարդապետանոցի շէնքը փոխադրելու։ Միւս կողմանէ վերոյիշեալ անձինք սկսան պատ հիւսել տալ Կաթողիկոսարանի և Վարժարանի միջև եղած դրան տեղափոխելը, ըստ սովորութեան, այլ ընդ նայոյ լուրերով ճշգրտեցան այս ապօրինութիւնը արգարացնելու ջանալ. ստանգի երկուքը միայն կ'ուզենք ակնարկել։ Ուզեցին ցոյց տալ թէ այդ շէնքը Ամենայ. Հոգեւոր Տէրը կ'ուզէ եղեր՝ իբրեւ թէ 'ի մօտոյ՝ վերածել կղերանոցի, Ուսումնարանը ընկելով Բողոքականական ինքնահար լուր մը, որովհետեւ ո՛չ թէ միայն Ուսումնարանը պիտի չվերնար, այլ նիւթական կարեւոր նորագութիւններէ վերջը, որոնք դեռ շարունակուելու վրայ էին՝ ուսմանց փրագիրն ալ մակարդակը աւելի բարձրացուելով, Հաստատութեան շատ աւելի օգտակարապէս ծառայելիք ատօնների պիտի վերածուէր նոյն Հաստատութիւնը։ Ընդ չէ եւս միւս այն տեղեկատուութիւնը քանի մը թերթերու թէ այն շէնքը որուն մէջ կը գտնուի Ուսումնարանը, այս նպատակաւ շինուած սպասարան մ'ըջից մզկիտ։ Այդ շէնքը կրկին անգամ շինել սուած է երջանկայիշատակ Հասուն Կաթողիկոս, իբրեւ Կոնստանդ. և շատ տարիներ ծառայած է այն նպատակին։ Իսկ բարեյիշատակ Ագարեան Կաթողիկոս, երբ հաստատեց Ուսումնարանը, այդ շէնքը առժամանակեայ կերպով շնորհեց Ուսումնարանի, — վեց տարուան համար, — որպէս զի վարձքի ծոխքէ ազատուի այն նոյն ժամանակամիջոցի համար։ Այս եղելութիւնը արձանագրուած է յայնժամու Վարչական ժողովոյն Արձանագրութեանց մատենին մէջ, յամին 1889, Հոկտեմբ. 13, Նիստ 22, էջ 83, այսպէս. «Հոգեւոր Տէրն ծանայց թէ ինքն մի միայն վեց տարուան համար, այսինքն մինչև յաւարտ ուսումնական վեցամսոյ շրջանին, նախկին Արքեպիսկոպոսի որ Պատկեր փոքոց (Եղեղի), առ այդ գործածութիւն ձրիաբար կը արամադրէր»։

Իսկ այս որոշողութիւնն ու արձանագրութիւնը կը կրէ Ագարեան Կաթողիկոսի ձեռնադիր վաւերական ստորագրութիւնը։ Այն Վարչականին տեղամ էին 'ի մէջ այլոց, Վսեմ. Ալլահվերտիեան Յովհ., Տամատ Յովհ., Սաքզլեան Յովհ., Էֆէնտիներ, Թընկեր Եսափեր Բաշա, Բօրթուգալեան Միք. Էֆ., Մարեան Մենիկ և Տիւգեան Սէրգիս Պէյեր, Բէքմէզեան Կոմիտաս և Կուրճեան Տօգթ. Էֆ.ներ։

Վեց տարի վերջը նոյն Պատրիարքը վերանորոգեց այդ շէնքը, ինչպէս իրմէն վերջը իւր յաջորդները նոյն բարեկարգութիւնը ցոյց տուին այս հաստատութեան հանգէպ, թա՛ղար աչքեւայլաճի պրոցներ, և ուրիշ եկամտանքի հաստատած և միշտ մասնաւոր գորգարանքով վարուած ըլլալէ զատ, շուրջ քառորդ դարէ 'ի վեր ամէն տարի հարիւրաւոր ասիրտոյն ալ ինքնց գրամանիտ պարգեւներով կը գոցէին։ Դեռ անցեալ տարի չորս հազար ֆրանք ձեռքբռնեցաւ ամսուէն։

Այդ շէնքները հիմա կը փոխանակուին այսքան ապերախտութեամբ։ Ժամանակէ մը 'ի վեր 'ի յայտ եկած հարկին և դիմումներուն վրայ Ամենայ. Հոգ. Տէրը Զմատու վանքին ներքին քարեկարգութեան վրայ ճիշդ տեղեկութիւն առնելով, նոյն վիճակին բարւոքման հարկ եղած միջոցները գործածելու համար որոշած էր Գատիպա-

խական Այցերու մը նշանակելու Առայտ կարեւոր պաշտօն կարգեց յատուկ Կանդակաւ գԱրհի. Օգոստինոս Աթոքաւ Սոյեղեան՝ Բերիոյ յիշակաւորը, որ Բր. յայտնի բարեմասնութեանց և առայտ բազմադիւն Միաբանութիւններու նկատմամբ իր բերմամբ գրեթէ մասնաւորապէս մատնանշուած էր Արհի. Արք. արդէն շուրջ երկու շաբաթէ ի վեր կը գտնուի ի Զբմմառ և կը զբաղի իր ամենակարեւոր պաշտօնով, և իւր կորովամիտ, արթուն գործունէութեամբ անպատճառ բարի էլքով մը պիտի վերջացնէ իւր այս առաքելութիւնը, յուրախութեամբ և ի միեմարութիւն ո՛չ միայն Միաբանից, այլ և Հայ-կաթողիկէ Պատրիարքութեան, որ մէկ աւելի քան առաջիկէ կը վայելէ այն Միաբանութեան առատ առատ բնական բարեքները:




ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

Վերափոխման կիրակի օրը Սան Սթէֆանոյի Խաղական Խորհուրդի հրաւիրմամբ, նախկին Պատրիարք Օրմանեան գնացած էր Պատարագելու տեղւոյն Եկեղեցւոյն մէջ. Պատարագի ժամանակ կարգ մը անձեր հակացոյց մը կատարելով կ'ուզէն արգելուլ Օրմանեանը պատարագելէ, բայց ամէն դիէ հոն հաւաքեալ գումարդունք ժողովուրդը լաւ գաս մը կու տայ, բազմկարգներուն՝ գոննք գանսկոծելով և յանձնելով ոստիկանութեան: Արարողութիւնը կը շարունակուին անխեղ կատարուելի:

Տեղւոյն ոստիկանապետը յայտարարած է հոն ներկայ գտնուողներուն թէ այս դէպքը կրօնական իրաւանց բռնարարք մը ըլլալով, Պատմ. Օրինագրքին 132րդ յօդուածին տրամադրութեանց համաձայն դաւադիրք պարտին տուած էլ իրենց յանդգնութիւնը իսկ նախկին Օսմ. Երեսփոխան Պօլկեզէնեան էֆ. բռնն զայրոյթով յայտարարած է զինք հարցաւորագներուն թէ տեղած ցոյցը դաւաճանութիւն մըն է և եկեղեցական իրաւանց ապօրէն բռնարարք մը, որ ո՛չ մէկ կեցցով կրնայ արդարանալի ըլլալ, մասնաւոր սրբապալարի մը մէջ, որ զերծ է ամէն տեսակ կաշկանդումէ, և թէ՛ անոր հեղինակներն ու զրդիները անխեղով է որ պիտի յիշուին եկեղեցական տարեգրութեանց մէջ:

Մենք բազմաբն հոնինք աւելցնելիք այս յայտարարութեանց վրայ, միայն անհարկի չենք սեպեր տեղաւ մըն ալ մեր հրապարակագիրներուն և նոյն իսկ ծանօթ կարգ մը մեր համազգային իշխանական հեղինակաւոր անձներուն յիշեցնել թէ, որքան ալ իրօք եպիսկոպիսի ու թեմաք ու մուրի արժանի ըլլայ Սան Սթէֆանոյի աղմկարարներուն ընթացքը, իւրենց ընթացքը քառապատիկ աւելի ստգտանելի է, որ երբ մէկ կողմէն ամիսներ առաջ, աւելի ներկայիս ալ կը ծափահարեն ու քաջալեր կը կարգան Հայ-կաթողիկէ եկեղեցիներուն մէջ տեղի ունեցած նման ցաւալի դէպքերու հեղինակներուն, միւս կողմէ Սան Սթէֆանոյի մէջ եղածներուն — որոնք տակաւին սառեան անգամ չեն մեր վէջ եղածներուն — հեղինակները գանսկոծելու արժանի կը գտնեն:

Իրաւացի չէ՞ եթէ հոս հարցնենք իրենց, Դուք ի՞նչ գոյն ունիք, կամ ի՞նչ պիտի կշիռ կը գործածէք:



ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ

Հիւսէյին Հիմի բաշա վերջապէս հրաժարեցաւ նախարարութենէն, և նախ Խորհրդի գոյն մէջ դադարեցաւ կարծեաց անհամաձայնութիւնը:

Դատական նախարար անուանեցաւ Մերակուտական Հալիմ պէյ — ներքին-փառձոց նախարար կարգուեցաւ Սերանիկի Կուսակալ Տանիշ պէյ:

*. Ռուս Կառավարութիւնը Կոմս Պերթոլտի առաջարկին նպաստաւոր ընդունելութիւն ընելով հանդերձ կը պահանջէ որ ապակեգրոնացման քաղաքականութիւնը գործադրուի հաւասարապէս բոլոր ազգերուն ալ համար: Եւ թէ պէտք է հարկ եղած նախազգուշութիւնները ձեռք առնուին, որպէս զի Թուրքիոյ մէջ զիր ու ցան ապրող քրիստոնեայ ազգութիւնները անհաւասար վիճակի մը ենթակայ չըլլան:

*. Ամսոյ 12ին աղետալի հրդեհ մը ծագեցաւ Սոյրաքաղաքի մէջ Սթամպուլ, Ֆինճանճըլարի ծայրը, ու քիչ ատենուան մէջ մեծ ծաւալ գտնելով, 100ի չափ խանութ, 5 խան և 40 տուններ մոխիր դարձուց: Կ'ըսուի թէ երկու կիներ ալ հրդեհին մէջ այրած են: Կատարուած քննութենէն կը հասկցուի թէ սիկառէ մը առաջ եկած է հրդեհը:

*. Տպագրական Տեսուչ Փազըր Նէճրպ պէյ, որ թուեց իթթիհատական է, պաշտօնանկ ըլլալով, իրեն յաջորդեց Պրուսայի կուսակալութեան մէքթուպօն Սիրէթ պէյ:

*. Նախարարական խորհուրդ. Նախարարաց Խորհուրդը երէկ Բ. Դրան մէջ Նիստ գումարելով գրադեցաւ Լիւանանի յիշատակագրի խորհրդակցութեամբ և յետ խորհրդակցութեան ընդունելով վաւերացուց առջի որ Նախարարական խորհրդակցութեան միջոցին գլխի առնուած տեղեկագիրը և որոշեց զրկել Կայս. պալատ իրատէ ստացուելու համար:

Նախարարաց Խորհուրդը գրադեցաւ նաև Վիեննայի Օսմ. Դեսպանին կողմէ զրկուած ընդարձակ հեռագրով, որ տեղեկութիւններ կը հաղորդէր այն ազդեցութեան վրայ, զոր գործած է Պերթոլտի առաջարկին հանդէպ Բ. Դրան պատասխանը:

Նոյնպէս նկատի առնուեցաւ Զուիցերիոյ մէջ Իտալացի պատուիրակներու հետ բանակցութիւն կատարող օսմ. պատուիրակներու կողմէ զրկուած տեղեկագրերը: Խորհրդակցութեան առարկայ դարձաւ նաև Ալպանական խնդիրը և վերջերս պատահած կարգ մը դէպքերը, որոնց մասին հարկ եղած կարգադրութիւնները եղան:

Եւրոպիոյ գործերու Նախարարը Նախարարաց Խորհուրդէն վերջ ուղղակի պաշտօնատուներ երթալով հեռագրաւ հրահանգներ տուաւ Ալպանական իշխանութեանց:

*. Իթքիհաս Հայաստանի մէջ խռովութիւն կը յարուցանէ. Զրոյց կը չըջի թէ իթթիհատի վարիչ մարմինը հռչակաւոր Պէտրիանդատէ Ապտիւրէզաքի եղբորը՝ Պէտրիան պէյի հետ բանակցութեան մտած է, Հայաստանի մէջ խռովութիւն մը հանելու համար: Այս խռովութիւնը, որ Քիւրտերը Հայերու և այլ քրիստոնեայ տարրերու գէմ գրգռելով պիտի սկսի, բնական է որ շատ զէջ աղէտներ յառաջ բերէ: Ամէն պարագայի մէջ այս լուրը ստուգութեան կը կարօտի և ամենամեծ վերապահութեամբ կը հրատարակենք զայն:

*. Փոխառութիւնը վաւերացուած. Կայսերական Իրատէ մը վաւերացուց այն պայմանագիրը, որով մէկ միլիոն երկու հարիւր հազար տկիի կանխավճար մը կ'առնուի Օսմ. պանդայէն արդէն ծանօթ պայմաններով:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ք Ի Ն

Վերափոխումն Ս. Կուսին	465
Օրմանեանի «Հայոց Նկեղեցի» գիրք	472
Հնչեակ	477
Տեղեկագրական	477

ԱՐՏՕՆԱՏԷՐ
ՅՈՎԼ. Մ. Վ. ԿԵՏԻՎ ԵՆ



ՏՆՕՐԷՆ-ԻՄՐԱԿՐԱԳԵՏ
ԳԵՈՐԳ Մ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպագր. Օսմանեան Գործակցական Ընկ. Էպուստուլու Տասէսի Թիւ 27

«ԿԱՔՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ» . Հայ Կաթողիկէ Պատրիարքարան
պատշաճական Շաբաթաբերրը, փոխադրուած է ի Կ. Պոլիս, եւ կը
սկսի հրատարակել իւր առ այժմ 16 մեծագիր էջերէ բաղկացած եւ
նոյն բովանդակութեամբ. ունենալով նաեւ տեղեկութեանց բաժին
մը, որ կը պարունակէ կարեւոր եւ սոյց ամէն յուրերն՝ համառոտ-
ուած. որով եւ մեծ դիւրութիւն կ'ընծայէ ընթերցողներէն անոնց
մանաւանդ որոնք առհասարակ ժամանակ չունին օրաբերք կարդալու :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Թուրքիոյ համար

Տարեկան Դնէկ . արծ. 40

Վեցամսեայ » » 20

Արաստահման

Տարեկան Ֆրանկ 10

Վեցամսեայ » 5

Բաժանորդագրութիւնք կանխիկ կը վճարուին Մանսա-Բոսնով եւ
կամ մէյ մէկ դրէ մըց նամակադրութեամբ :

Մէկ թիւ 1 Դահեկան



Նամակ . յղուած . եւն. կը դրկուին խմբագրութեան հասցէին.

ԿԱՔՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց

Բիրա

Կ. Պոլիս

Katoghighe Arzakank
Patriarcat Arménien Catholique
Péra Constantinople

- ԾԱՆՕԹ.— 1.— Կոճագանց կը հրատարակուի շաբաթօրերը:
2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ տոյնութեամբ
հրատարակել իրեն յղուած ու եւ է յղուած:
3.— Չեղագիրներ եւ չեն դարձուիր:
4.— Յօդուածներու ձեռագիրներ պէտք է գրուած ըլլան օրագրին մէկ
կողմը միայն:
5.— Ծանուցմանց համար մանաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: